«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպություն

Տարեկան հաշվետվություն | 2019 - 2020



ՎԱՆԱՁՈՐ, 2021

«Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպություն

Տարեկան հաշվետվություն | 2019-2020

ՎԱՆԱՁՈՐ, 2021

© 2021 | Զեկույցը հրապարակվել է
«Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք.
Վանաձոր, 2002, Մյասնիկյան 12, Բն. 40

Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632

Էլ. Փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

URL: https://www.peacedialogue.am
https://safesoldiers.am/

Խմբագրական թիմ՝

Էդգար Խաչատրյան
Մարիաննա Խաժակյան
Վահագն Անտոնյան
Անի Դերձյան

Բովանդակություն

Բացման խոսք
Սովորել համակերպվել, ստեղծագործել, հաղթահարել,
վերաիմաստավորել եւ վերակառուցել 4

Թեմատիկ ուղղվածությունները եւ
ներգրավվածության մակարդակները 6
Տեսլականը, առաքելությունը եւ մեթոդները 7
2019-2020թթ. ռազմավարական նպատակները 8
Կազմակերպության 2019-2020թթ. ծրագրերը 9

Հակիրճ տեղեկություն 2019-2020թթ. ծրագրերի մասին..... 10

Օրինակի ուսումնասիրություն.
պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների
պաշտպանությանն ուղղված ծրագրեր 11
Օրինակի ուսումնասիրություն.
խաղաղասիրական նախաձեռնություններ 17
Օրինակի ուսումնասիրություն.
համայնքի հզորացում 21
2019-2020թթ. ծրագրերի արդյունքները 24
«Խաղաղության երկխոսություն» հկ-ի
2019-2020թթ. հովանավորները եւ գործընկերները 25

2019-2020թթ. ֆինանսական հաշվետվությունը 26

Կազմակերպության ֆինանսական իրավիճակը 2019թ. դրությամբ 27
Կազմակերպության ֆինանսական իրավիճակը 2020թ. դրությամբ..... 28

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի
2019-2020թթ. անձնակազմը 29

Բացման խոսք

Սովորել համակերպվել, ստեղծագործել, հաղթահարել, վերաիմաստավորել եւ վերակառուցել



Էդգար Խաչատրյան
«Խաղաղության երկխոսություն»
հկ-ի նախագահ

Հարգելի գործընկերներ եւ ընկերներ, շահառուներ եւ աջակիցներ, 2020թ-ը մեր կազմակերպության տասներկուամյա պատմության թերեւս ծանրագույն տարին էր: Տարեմուտին կորոնավիրուսային համաճարակի (COVID-19) ներխուժումը մարդկության առօրյա կտրուկ կերպով փոխեց մեր, մեր գործընկերների եւ ընդհանրապես յուրաքանչյուր մարդու աշխարհայացքը: Այն գլխիվայր շրջեց հաստատված օրինաչափությունները՝ մեծապես փոփոխությունների ենթարկելով մարդկանց սովորույթներն ու գործունեությունն ամբողջ աշխարհով մեկ: Համաճարակը զգալի խոչընդոտներ ստեղծեց այն բաղձալի ծրագրերի եւ նախագծերի իրականացման համար, որոնք մենք «Խաղաղության երկխոսություն» հկ-ում մեծ սպասումներով նախատեսել էինք 2020թ-ի համար:

Մինչ մարդկությունն իր ջանքերն ուղղում էր այս սպառնալիքին դիմակայելուն, եւ բազմաթիվ երկրներ պայքարում էին համաճարակի սոցիալական, քաղաքական եւ տնտեսական ազդեցությունները հաղթահարելու նոր ռազմավարություններ մշակելու ուղղությամբ, սեպտեմբերին Հարավային Կովկասում բռնկվեց 1994թ-ից ի վեր ուժգնությամբ իր նախադեպը չունեցող լայնածավալ պատերազմ: Ադրբեջանական եւ հայկական զինված ուժերի միջեւ քառասունչորսօրյա արյունալի մարտերի արդյունքում զոհվեց առնվազն 143 խաղաղ բնակիչ (այդ թվում՝ երեխաներ), սպանվեցին եւ վիրավորվեցին հազարավոր զինվորներ, եւ եւս հարյուրավոր զինծառայողներ մինչ այժմ անհետ կորած կամ գերեվարված են: Իսկ Լեռնային Ղարաբաղի բնակչության կեսը՝

շուրջ 75000 մարդ, ստիպված եղան լքել իրենց տները եւ բնակավայրերը:

2020թ-ի նոյեմբերին Ռուսաստանի միջնորդությամբ ստորագրվեց հրադադարի վերաբերյալ փաստաթուղթը, որը մեծաթիվ բաց հարցեր թողեց՝ կապված, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց պաշտպանության եւ նրանց աջակցության հետ: Լեռնային Ղարաբաղի բնակչության ամենախոցելի հատվածը, թերեւս, կազմում են հատկապես այն մարդիկ, ովքեր պատերազմի ավարտից հետո անկարող են վերադառնալ Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող իրենց բնակավայրերը, քանի որ դրանք այժմ գտնվում են ադրբեջանական վերահսկողության ներքո: Ներկայումս այս մարդիկ չունեն իրավական կարգավիճակ, իսկ նրանց հետագա ճակատագիրը դեռեւս անորոշ է:

Պետք է ընդունել, որ վերոնշյալ մարտահրավերները երեւան բերեցին մարդու իրավունքների պաշտպանության եւ հակամարտությունների խաղաղ կարգավորման միջազգային մեխանիզմների անկատարությունը: Պատերազմական գործողությունների անհապաղ դադարեցմանն ուղղված միջազգային հանրության վճռական գործողությունների վերաբերյալ՝ հակամարտության գոտում գտնվող բազում քաղաքացիների ակնկալիքները, ցավոք, չարդարացվեցին, ինչի արդյունքում՝ տարածաշրջանի բնակչության շրջանում կտրուկ նվազեց վստահությունն այդ միջազգային կառույցների նկատմամբ: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ տարածաշրջանում ցանցերի ստեղծմանը եւ այլընտրանքային խոսույթների ձեւավորմանն ուղղված բոլոր ջանքերը պատերազմական գործողությունների արդյունքում ակնթարթորեն արժեզրկվեցին հակամարտության մեջ ներգրավված հասարակությունների շրջանում: Պատերազմն ի դերեւ հանեց իրավապաշտպան եւ խաղաղասիրական կազմակերպությունների հեղինակությունը եւ կասկածի տակ առավ խաղաղ ճանապարհով հակամարտությունների կարգավորման արդյունավետությունն ու ներուժը:

Անշուշտ, վերոնշյալ հանգամանքներն անխուսափելիորեն խոչընդոտ հանդիսացան նաեւ «Խաղաղության երկխոսություն» հկ-ի 2020թ-ի գործունեության համար:

...Այժմ, հաշվի առնելով անցյալի բացթողումներն ու թերությունները՝ ջանում ենք մշակել նոր մոտեցումներ, որոնք կօգնեն մեզ նպաստել ժողովրդավարական արժեքների տարածմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը եւ հակամարտության արդյունքում տուժած խմբերի շահերի պաշտպանությանը...

Այս մարտահրավերներին դիմակայելու համար սկզբնապես մեր ջանքերն ուղղված էին համաճարակով պայմանավորված փոփոխություններին համակերպվելուն եւ նոր ու առավել ստեղծարար մոտեցումներ որոնելուն, որը հնարավոր կդարձներ մեր ռազմավարական գործունեության շարունակելիությունը: Այնուհետեւ՝ 2020 թ-ի ավարտին, հետպատերազմյան իրողությունը ստիպեց մեզ ուղղել մեր ջանքերը պատերազմի հետեւանքների, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ ժողովրդավարության բնագավառներում ի հայտ եկած մարտահրավերների հաղթահարմանը: Այժմ, հաշվի առնելով անցյալի բացթողումներն ու թերությունները՝ ջանում ենք մշակել նոր մոտեցումներ, որոնք կօգնեն մեզ նպաստել ժողովրդավարական արժեքների տարածմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, հակամարտության արդյունքում տուժած խմբերի շահերի պաշտպանությանը, ինչպես նաեւ պատերազմում ներգրավված հասարակությունների ներկայացուցիչների միջեւ երկխոսության հնարավորությունների ու փոխվստահության վերականգնմանը:

Հույս ունենք, որ մոտ ապագայում ձեր աջակցությամբ եւ ձեզ հետ համագործակցությամբ մեզ կհաջողվի թեպետեւ փոքր, սակայն չափազանց անհրաժեշտ փոփոխություններ մտցնել հակամարտությունից տուժած համայնքների կյանքում, նպաստել տարածաշրջանում ապահովության եւ անվտանգության մթնոլորտի հաստատմանը եւ խթանել մարդու իրավունքների, ժողովրդավարական արժեքների եւ հարատեւ խաղաղություն ունենալու հնարավորության նկատմամբ մեր քաղաքացիների վստահության վերակագնմանը:

Թեմատիկ ուղղվածությունները

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ամրապնդում

Խաղաղության շարժման ձեւավորում եւ խաղաղության մշակույթի տարածում

Տեղական համայնքների ներգրավում եւ հզորացում

Ներգրավվածության մակարդակները

- միջազգային
- տարածաշրջանային
- տեղական

Տեսլականը

Խաղաղ եւ ժողովրդավար հասարակություններում իրավունքի եւ օրենքի գերակայություն:



Առաքելությունը

Նպաստել հակամարտող եւ հետկոնֆլիկտային հասարակություններում մարդու իրավունքների պաշտպանությանը, խաղաղասիրական շարժման ու խաղաղության մշակույթի ձեւավորմանը, ժողովրդավարական արժեքների եւ ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանն ու հզորացմանը:



Մեթոդները

մարդու իրավունքների մշտադիտարկում |
իրավաբանական աջակցության ցուցաբերում |
շահերի պաշտպանություն եւ լոբբինգ |
քաղաքականության մշակում |
լրատվական աշխատանք | փորձի փոխանակում |
հետազոտությունների եւ վերլուծությունների իրականացում |
կարողությունների զարգացում |
ցանցերի ստեղծում եւ հզորացում

2019-2020թթ. ռազմավարական նպատակները

Հակամարտող եւ հետկոնֆլիկտային հասարակություն-ներում քաղաքացիական հասարակության դերակատարների հզորացում

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանություն եւ խթանում

Պետական ինստիտուտների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության խթանում

Քաղաքական եւ քաղաքացիական գործընթացներին կանանց եւ տղամարդկանց հավասար ներգրավվածության հնարավորությունների ապահովում

Քաղաքացիական նախաձեռ-նությունների աջակցություն

Հակամարտող երկրների հասարա-կությունների ներկայացուցիչների միջեւ փոխվստահության եւ երկխոսության ձեւավորում



Ռազմականացման ազգայնական ու հայրիշխանական միտումների կրճատմանը նպաստում եւ դրանց հակակշիռ այլընտրանքների ձեւավորում

Բռնի հակա-մարտություններից տուժած խմբերի շահերի պաշտպանություն

Կազմակերպության 2019-2020թթ. ծրագրերը

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում

ՌՈ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը

Քաղաքացիական հասարակության աջակցությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության սահմանման գործում

Քաղաքացիական հասարակության ներուժի զարգացումը մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության գործողությունների արդյունավետ մշտադիտարկման նպատակով

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՁԵՒԱՎՈՐՈՒՄ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՈՒՄ

Ղարաբաղյան հակամարտության արխիվ

Վերաիմաստավորում, համագործակցություն, փոխանակում

Լրագրությունն առանց սահմանների

Կոնտակտ 2.0

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՒ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Հարավային Կովկասում կանանց հիմնախնդիրներով զբաղվող ցանցի կարողությունների զարգացում

Լոռու մարզի երիտասարդների համար հակամարտության փոխակերպման դասընթացների շարքի իրականացում

Հայաստանի հյուսիսային մարզերում նոր սերնդի քաղլրագրողների պատրաստում

Հակիրճ տեղեկություն 2019-2020թթ. ծրագրերի մասին

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ամրապնդում

Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում

ՌՈ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը

Քաղաքացիական հասարակության աջակցությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության սահմանման գործում

Քաղաքացիական հասարակության ներուժի զարգացումը մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության գործողությունների արդյունավետ մշտադիտարկման նպատակով

Օրինակի ուսումնասիրություն. պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրեր

Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում

Ծրագրի տեւողությունը՝ 1 տարի (2018-2019թթ.)
2019թ. բյուջեն՝ 13.190.000,00 դրամ (+/- 24.260,00 եվրո)
Հովանավորը՝ Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն
(Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով տրամադրված դրամաշնորհ)

2018թ. սեպտեմբերին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն սկսեց **«Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում»** նախաձեռնության իրականացումը: Ծրագրի շրջանակներում կազմակերպությունը ձեւավորեց Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական շարժումների եւ լրատվական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած մշտադիտակող խումբ, որի գործունեությունն ուղղված էր Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի (2017-2019թթ. ՄԻՊԳԾ) շրջանակներում պաշտպանական ոլորտին առնչվող գործողությունների մշտադիտարկմանը: 2019թ. նոյեմբերին կազմակերպությունը հրապարակեց ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2017-2019թթ. ՄԻՊԳԾ-ի շրջանակում իրականացված գործողությունների վերաբերյալ 2019թ-ի զեկույցը, որը հասանելի է «ԽԵ»-ի կայքում:

Ինչպես ներկայացված է զեկույցում, մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են առանձին գործողությունների ազդեցության չափելիության հետ կապված խնդիրներ. դժվար էր չափել առանձին գործողությունների արդյունավետությունը եւ այն աստիճանը, որով դրանք նպաստել են կամ կնպաստեն ծրագրի շահառուների շահերի կամ իրենց իրավունքների պաշտպանությանը: Կազմակերպության նախագահ Էդգար

«Դժվար էր չափել գործողությունների արդյունավետությունը եւ այն աստիճանը, որով դրանք նպաստել են կամ կնպաստեն ծրագրի շահառուների շահերի կամ իրավունքների պաշտպանությանը»:

Էդգար Խաչատրյան, *ԽԵ*

Խաչատրյանը, զեկույցը ներկայացնելիս, նշեց, որ ընդանուր առմամբ՝ բացահայտված խնդիրների մի մասը գտնվում են իրավական, իսկ մյուս մասը՝ իրավակիրառ դաշտում:

Հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները՝ մշտադիտարկող խմբին ծրագրի հիմնական թիրախային լսարանի հետ աշխատելու հնարավորություն հաճախ չէր ընձեռվել, այնուամենայնիվ խմբին հաջողվել էր կապ հաստատել **շուրջ երկու հարյուր հինսուն (290) զորակոչիկների հետ՝** իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություն կատարելու նպատակով: Ավելին, մշտադիտարկող խումբը եւ ծրագրի փորձագետները հետեւողականորեն իրավաբանական աջակցություն են ցուցաբերել քաղաքացիներին (զորակոչիկներին) եւ նրանց ընտանիքների անդամներին զինվորական ծառայության, զորակոչի կամ զորացրման ընթացքում գրանցված մարդու իրավունքների խախտումների եւ այլ խնդիրներին առնչվող հարցերի շուրջ: Ծրագրի իրականացման տասներկու ամիսների ընթացքում

իրավաբանական աջակցություն է ցուցաբերվել շուրջ **երեսունութ (38) քաղաքացիների**: Այդ **գործերից հինգը (5)** ներկայումս գտնվում են դատական քննության փուլում, եւ ծրագրի **փորձագետներից երկուսը** լիազորագրի հիման վրա ներկայացնում եւ պաշտպանում են քաղաքացիների շահերը դատարանում: Առողջական խնդիրներով զորակոչված **մեկ (1) քաղաքացի** արդեն զորացրվել է ծրագրի փաստաբանների կողմից իրականացված արդյունավետ աշխատանքի շնորհիվ:

Խմբի դիտարկումների եւ եզրակացությունների հիման վրա կազմվել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է ՊՆ պաշտոնյաներին, օրենսդիր եւ գործադիր մարմիններին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններին: Արդյունքները ներկայացվել են նաեւ ավելի լայն հանրությանը՝ հարցազրույցների եւ հանրային քննարկումների ընթացքում: Վերջիններիցս մեկին ներկայացած պաշտոնյաներն ընդգծել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից իրականացվող մշտադիտարկման կարեւորությունը եւ պատրաստակամություն են հայտնել համագործակցել հաջորդ՝ 2020-2022թթ-ի գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների շրջանակներում:

ՀՀ ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչ Արթուր Հովհաննիսյանի խոսքով՝ Ազգային ժողովը դիտարկում է քաղհասարակությանը որպես գործընկեր եւ հետագայում եւս պատրաստ է աջակցել ՄԻՊԳԾ-ի մշտադիտարկման աշխատանքներին: **«Զեկույցում նշված խնդիրները իսկապես գոյություն ունեն, եւ իմ գործընկերները դա նույնպես կհաստատեն: Սակայն մենք պետք է հասկանանք՝ այս խնդիրները համակարգային են, թե՞ իրավիճակային»**, - նշել է նա:

ՌՈ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը

Ծրագրի տեւողությունը՝ 9 ամիս
Բյուջեն՝ 3.872.982,95 դրամ (+/- 8.000,00 դոլար)
Հովանավորը՝ «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան»

«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության «Դրական փոփոխություն՝ քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով» ծրագրի շրջանակներում տրամադրված դրամաշնորհի միջոցներով «Խաղաղության երկխոսություն» հկ-ն 2019թ-ին նախաձեռնեց ՀՀ ռազմական ոստիկանության բաժիններում քրեական վարույթների շրջանակներում ներգրավված անձանց նկատմամբ խոշտանգումների դեպքերի կանխմանն ուղղված **«ՌՈ բերված անձանց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի ապահովումը»** ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում «Խաղաղության երկխոսություն» հկ-ն փորձ է կատարել վերհանել գործող ներպետական օրենսդրությունում քաղաքացիներին խոշտանգումներից պաշտպանելու հարցում առկա բացթողումները: Բացի այդ, ծրագրի անձնակազմը փորձել է ուսումնասիրել Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ), Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ), Խոշտանգումների դեմ կոմիտեի (ԽԴԿ) եւ այլ միջազգային մարմինների կողմից ներկայացված առաջարկություններն ու հանձնարարականները՝ պարզելու համար Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի եւ ՀՀ ներպետական օրենսդրության միջեւ գոյություն ունեցող անհամապատասխանությունները:

Հիմնվելով կազմակերպությանը հայտնի՝ ԶՈՒ-ում գրանցված միջադեպերի արդյունքում քրեական վարույթների շրջանակներում որպես կասկածյալ եւ վկա ՌՈ բերված

անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի ուսումնասիրության վրա՝ ծրագրի անձնակազմը փորձել է վերհանել նաեւ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրներն ու դրանց պատճառները, մշակել է հնարավոր լուծումների առաջարկություններ, ապա ներկայացրել դրանք ոլորտի պատասխանատու մարմիններին:

Ավելին՝ գործողությունների իրականացման եւ արդյունքների վերաբերյալ «Խաղաղության երկխոսությունը» մշակել է զեկույց, որի նպատակն էր բարձրացնել թեմայի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը եւ նպաստել ոլորտի դրական փոփոխություններին: Զեկույցը հասանելի է «ԽԵ»-ի կայքում:

Քաղաքացիական հասարակության աջակցությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության սահմանման գործում

Ծրագրի տեւողությունը՝ 8 ամիս
Բյուջեն՝ 19.605.000,00 դրամ (+/- 37.342,86 եվրո)
Հովանավորը՝ Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանություն
(Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով տրամադրված դրամաշնորհ)

Այս նախաձեռնությունը հանդիսանում է վերոհիշյալ «Քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ խթանման գործում» ծրագրի տրամաբանական շարունակությունը: Ինչպես նշվեց, այդ ծրագրի շրջանակներում «Խաղաղության երկխոսությունը» ձեւավորել է տարբեր իրավապաշտպան հկ-ների ներկայացուցիչներից, լրագրողներից եւ փաստաբաններից բաղկացած մշտադիտարկող խումբ, որի գործունեությունն ուղղված էր Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտին առնչվող գործողությունների մշտադիտարկմանը: Ծրագրի իրականացման ողջ ընթացքում ԽԵ-ն մշտական, հետեւողական, տեխնիկական եւ մեթոդական աջակցություն է ցուցաբերել մշտադիտարկող խմբին:

2019թ. հոկտեմբերի 26-ի N1978-L հրամանագրով ՀՀ կառավարությունը հաստատեց ՄԻՊ ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների նոր ծրագիրը: **«Քաղաքացիական հասարակության աջակցությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության սահմանման գործում»** ծրագրի շրջանակներում մշտադիտարկող խումբը շարունակեց փաստագրել

«Հայաստանում Թավշյա հեղափոխությունից հետո մենք չենք վախենում անվտանգության ոլորտում մեր ունեցած խնդիրների վերաբերյալ բարձրաձայնելուց եւ փորձում ենք գտնել դրանց լուծման արդյունավետ ուղիներ՝ բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ»:

Անդրանիկ Քոչարյան
ՀՀ ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ

ՄԻՊԳԾ-ի իրականացման վերաբերյալ տեղեկությունները: Հիմնվելով նախապես մշակված մեթոդաբանության վրա՝ փորձագետների ներգրավմամբ՝ խումբն ուսումնասիրել է 2020-2022թթ. ՄԻՊԳԾ-ի շրջանակներում պաշտանական ոլորտին առնչվող գործողությունների իրականացումը, մշակված տեղեկատվական եւ ուսումնական նյութերը, ինչպես նաեւ ՀՀ ԶՈՒ-ում COVID-19 համաճարակի տարածման կանխմանն ուղղված իրավական ակտերն ու այդ ուղղությամբ կատարվող միջոցառումների իրականացումը: Ամառային զորակոչի ընթացքում մշտադիտարկող խմբի հետ

մեկտեղ ծրագրի թիմն ուսումնասիրել է վերոնշյալ իրավական ակտերի գործնական կիրառումը զորակոչիկների հետ ստանդարտացված հարցազրույցների անցկացման միջոցով:

2020թ-ի ամառային զորակոչի ընթացքում վերոհիշյալ հարցերի շուրջ մշտադիտարկող խմբին հաջողվել է անցկացնել մոտ **երկու հարյուր (200) հարցազրույց**: Նույն ժամանակահատվածում շուրջ **քառասունյոթ (47) քաղաքացի** ստացել է իրավաբանական աջակցություն: Ավելին՝ ծրագրի փաստաբանները՝ որպես տուժողների իրավահաջորդի ներկայացուցիչ, ներգրավված են եղել ՀՀ ԶՈՒ-ում գրանցված միջադեպերի առիթով **հարուցված երկու (2) քրեական գործում**:

Հարկ է նշել, որ պաշտպանական ոլորտի նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը հնարավոր չէր լինի իրականացնել առանց ոլորտի նկատմամբ մշտական վերահսկողության պաշտոնական լիազորությամբ օժտված դերակատարների հետ կառուցողական համագործակցության ձեւավորման: Ուստի, «Քաղաքացիական հասարակության աջակցությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության սահմանման գործում» ծրագիրը նպատակաուղղված էր նաեւ մշտադիտարկող խմբի եւ ՀՀ Խորհրդարանի միջեւ համագործակցային երկխոսության ձեւավորմանը:

Ծրագրի շրջանակներում 2020թ. հունիսին հկ-ն նախաձեռնեց քննարկում ՀՀ ազգային ժողովում: Քննարկմանը մասնակցել են ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, նույն հանձնաժողովից Քրիստինե Պողոսյանը, ինպես նաեւ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներ Մարիա Կարապետյանը, Սարգիս Խանդանյանը եւ Ռուստամ Բաքոյանը: Քննարկումն ուղղված էր մշտադիտարկող խմբի եւ մշտական հանձնաժողովների միջեւ հետագա երկկողմ եւ շահավետ համագործակցության գործնական հիմքերի ձեւավորմանը, ինչպես նաեւ հետագա գործունեության համար իրատեսական գործողությունների ծրագրի մշակմանը:

Ընդգծելով քաղաքացիական հասարակության դերը պաշտպանության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելու գործում՝ խորհրդարանականները պատրաստակամություն են հայտնել աջակցել մշտադիտարկող խմբին իրենց աշխատանքներն իրականացնելու գործում: Նրանք նաեւ նշել են, որ համագործակցության շրջանակներում իրենք ակնկալում են ստանալ մշտադիտարկման ընթացքում բացահայտված խնդիրների հնարավոր պատճառների վերաբերյալ խմբի անաչառ եւ անկողմնակալ վերլուծությունները, ինչպես նաեւ դրանց լուծման վերաբերյալ կոնկրետ եւ իրատեսական առաջարկություններ:

Ուշագրավ է նաեւ, որ 2020թ. սկզբին «Խաղաղության երկխոսությունը» ներգրավվել է **«Անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի»** աշխատանքներում: ՀՀ ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի խորհրդատվական մարմին հանդիսացող այս հարթակի նպատակն է խթանել Հայաստանում անվտանգության ոլորտի ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողությանը: Հարթակը միավորում է անվտանգության ոլորտում գործող պետական կառույցների, արտաքին վերահսկողության մարմինների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին:

«Հայաստանում թավշյա հեղափոխությունից հետո մենք չենք վախենում անվտանգության ոլորտում մեր ունեցած խնդիրների մասին բարձրաձայնելուց եւ փորձում ենք գտնել դրանց լուծման արդյունավետ ուղիներ՝ բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ»,- նշել է ՀՀ ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը հարթակի բացման իր խոսքում: **«Համախմբելով քաղաքացիական հասարակությանը, խորհրդականներին եւ հանրային ծառայություններ մատուցող մարմիններին մեկ վայրում՝ հարթակը կնպաստի ինչպես քաղաքացիական, այնպես էլ խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով անվտանգության ոլորտի բազմակողմանի եւ անհրաժեշտ բարեփոխումներ»** - հայտարարել է Քոչարյանը:

Քաղաքացիական հասարակության ներուժի զարգացումը մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության գործողությունների արդյունավետ մշտադիտարկման նպատակով

Ծրագրի տեւողությունը՝ 1 տարի (ընթացիկ)
Բյուջեն՝ 14.311.000,00 դրամ (+/- 30.000,00 դոլար)
Հովանավորը՝ «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան»

Ծրագրի նպատակն է նպաստել զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի բարելավմանը՝ ՄԻՊԳԾ-ում ներառված միջոցառումների մշտադիտարկման, ինչպես նաեւ ՀՀ ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների վրա հիմնված համապարփակ առաջարկությունների մշակման միջոցով: Բացի այդ, նախաձեռնությունը միտված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ մշտադիտարկումների իրականացման եւ շահերի պաշտպանության ոլորտներում:

Հատկանշական է, որ այս ծրագիրը սերտորեն կապված է վերոհիշյալ «Քաղաքացիական հասարակության աջակցությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության սահմանման գործում» նախաձեռնության հետ: Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի համաֆինանսավորմամբ հնարավոր դարձավ ոչ միայն ապահովել նախաձեռնության շարունակելիությունը (իրականացնել ՄԻՊԳԾ-ի մշտադիտարկումը նաեւ 2021թ-ին), այլեւ նոր բաղադրիչներ ավելացնել այդ ծրագրին:

Ծրագիրը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից՝

ա. քաղհասարակության կազմակերպությունների շրջանում ԶՈՒ-ի գործունեության մշտադիտարկման եւ շահերի պաշտպանության ուղղությամբ կարողությունների զարգացում
բ. ՄԻՊ 2020-2022թթ. ԳԾ-ում ներառված գործողությունների մշտադիտարկման իրականացում
գ. մշտադիտարկման արդյունքների հիման վրա քաղաքականության փոփոխությունների ջատագովություն:

Ծրագրի շրջանակներում 2020թ-ին քաղաքացիական հասարակության տասնյոթ (17) նոր ներկայացուցիչներ ընտրվել եւ վերապատրաստվել են 2020-2022թթ. ՄԻՊԳԾ-ի շրջանակներում պաշտպանական ոլորտին առնչվող գործողությունների մշտադիտարկում իրականացնելու նպատակով: Հրավիրված փորձագետի ներգրավմամբ մշակվել են չափորոշիչներ՝ գնահատելու 2020-2022թթ. ԳԾ շրջանակներում պաշտպանական ոլորտին վերաբերող գործողությունների համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշների պահանջների հետ: Ինչպես արդեն նշվեց, մշտադիտարկման շրջանակներում ամառային զորակոչի ընթացքում շուրջ **երկու հարյուր (200) զորակոչիկի** հետ անց են կացվել հարցումներ, իսկ երեսունհինգ (**35) զորակոչիկ** ստացել է իրավաբանական աջակցություն: 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ լայնամասշտաբ ռազմական գործողությունների արդյունքում հայտարարված ռազմական դրության ընթացքում ծրագրի շրջանակներում եւս **տասներկու (12) քաղաքացի** ստացել է իրավաբանական խորհրդատվություն ռազմական դրության ընթացքում զորահավաքի հետ կապված հարցերի շուրջ:

Ուշագրավ է նաեւ, որ 2020թ-ին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն ընդգրկվել է ՄԻՊԳԾ-ի համակարգումը եւ մշտադիտարկումն իրականացնող համակարգող խորհրդի կազմում:

Հակիրճ տեղեկություն 2019-2020թթ. ծրագրերի մասին

Խաղաղության շարժման ձեւավորում եւ խաղաղության մշակույթի տարածում

Կոնտակտ 2.0

Օրինակի ուսումնասիրություն.
խաղաղասիրական նախաձեռնություններ

Ղարաբաղյան հակամարտության արխիվ

Ծրագրի տեւողությունը՝ 9 ամիս
Բյուջեն՝ 8.066.450,00 դրամ (+/- 14.900,00 եվրո)
Ծրագրի գործընկերները՝ «Ինտերնյուս Ադրբեջան», Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, Մարդասիրական հետազոտությունների հասարակական միություն, Ստեփանակերտի մամուլի ակումբ, «Սվիսփիս» հետազոտական ինստիտուտ (swisspeace)
Հովանավորը՝ Եվրոպական միություն, «Հաշտեցման Ռեսուրսներ» (Consiliation Resources)

«Ղարաբաղյան հակամարտության արխիվ» ծրագիրը Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատմությունն արտացոլող նյութերի հավաքագրման նախաձեռնություն է՝ իրականացված այն հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք հետաքրքրված են Լեռնային Ղարաբաղի հակամարտության զարգացման եւ հետեւանքների վերաբերյալ հիշողությունները պահպանելու նպատակով սկզբնաղբյուրներից ստացված տեղեկությունները հավաքագրելով:

«Ղարաբաղյան հակամարտության արխիվ» ծրագրի առաջնահերթությունը հանդիսանում էր հակամարտությանը վերաբերող անհետացման վտանգի տակ գտնվող եզակի նյութերի թվայնացումն ու պահպանումը, ինչպես նաեւ բազմակողմանի եւ հնարավորինս ամբողջական տեղեկատվության ապահովումը՝ հակամարտության կողմեր հանդիսացող հասարակություններում եւ նրանց միջեւ գիտակցված ու բովանդակալի պատմական երկխոսություն ծավալելու հնարավորությունների պահպանման նպատակով: Վերոնշյալ նյութերը կարող են հետագայում տարաբնույթ, այդ թվում՝ կրթական նպատակների ծառայել:

Արխիվային նյութերի հավաքագրման առաջին փուլն ընդգրկում էր 1988-1990թթ-ը՝ կենտրոնացված լինելով, մասնավորապես՝ քաղաքական խռովությունների եւ բռնությունների սկզբի, ինչպես նաեւ անհետ կորածների ընտանիքների անձնական արխիվային նյութերի (փաստաթղթեր, լուսանկարներ, աուդիո-տեսանյութեր) վրա:

Վերաիմաստավորում, համագործակցություն, փոխանակում

Ծրագրի տեւողությունը՝ 3 տարի
Բյուջեն՝ Ծրագրի բյուջեն չի կառավարվել «ԽԵ» հկ-ի կողմից:
Ծրագրի գործընկերները՝ Ֆրանկոգերմանական երիտասարդական գրասենյակ (OFAJ, Ֆրանսիա), «Une terre culturelle» ասոցացիա (Ֆրանսիա), «Le Centre Français de Berlin» (Գերմանիա), «AFS ISTANBUL» (Թուրքիա)
Հովանավորները՝ «Erasmus +» – ի երիտասարդության եւ սպորտի կենտրոն (Ֆրանսիա) եւ Ֆրանկոգերմանական երիտասարդական գրասենյակ

Չորս երկրների՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ երիտասարդների փոխանակման այս ծրագիրը մեկնարկել է 2017թ. նոյեմբերին Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Վերոնշյալ վայրերը ներկայացնող 18-25 տարեկան քսանչորս **(24) երիտասարդներ** հանդիպել են միմյանց նախանշված չորս երկրներում՝ նպատակ ունենալով վերանայել իրենց տեսակետները պատմության եւ «այլոց» վերաբերյալ, ինչպես նաեւ համագործակցել եւ ստեղծել ապագայի համատեղ տեսլական:

2018թ-ին երիտասարդները հանդիպել են Հայաստանում, որտեղ նրանց հյուրընկալել է «Խաղաղության երկխոսություն» հկ-ն: Դրան հաջորդել է Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում կայացած հանդիպումը, իսկ ապա 2019թ-ին ծրագրի մասնակիցները միմյանց հանդիպել են Թուրքիայի Ստամբուլ քաղաքում:

«Կարծես թե իրավիճակի առաջիկա բարելավման մասին խոսելը վաղ է: Իրականում, մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ մեր հասարակությունները հակված են մեկուսացման, եւ ազգայնական մտքերն ու գաղափարախոսությունները սրընթաց կերպով տարածվում են», - ասել է ծրագրի ֆրանսիացի մասնակիցներից մեկը՝ Դեյվիդ Դիանկուրտը Հայաստան կատարած այցի ընթացքում: **«Հիմնականում հենց այդ է պատճառը, որ նշված չորս երկրների երիտասարդ ուսանողների եւ կամավորների համար չափազանց կարեւոր է իրագործել մեկ նպատակ՝ հաղթահարել առկա ցավագին իրավիճակը եւ այս երկրների երիտասարդների միջեւ հաստատել կայուն հաղորդակցություն եւ համագործակցություն»**, - նշել է նա:

...Երիտասարդ ուսանողների եւ կամավորների համար չափազանց կարեւոր է իրագործել մեկ նպատակ՝ հաղթահարել առկա ցավագին իրավիճակը եւ այս երկրների երիտասարդների միջեւ հաստատել կայուն հաղորդակցություն եւ համագործակցություն:

Դեյվիդ Դիանկուրտ, *ծրագրի մասնակից, Ֆրանսիա*

Լրագրությունն առանց սահմանների

Ծրագրի տեւողությունը՝ 3 ամիս
Բյուջեն՝ Ծրագրի բյուջեն չի կառավարվում «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից:
Ծրագրի գործընկերները՝ «Une terre culturelle» ասոցացիա, Ֆրանկոգերմանական երիտասարդական գրասենյակ (OFAJ)

2020թ. հուլիսին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն իր գործընկերներ «Une terre culturelle»-ի եւ ֆրանս-գերմանական երիտասարդական գրասենյակի հետ համատեղ իրականացրել է **«Լրագրություն առանց սահմանների»** միջմշակութային փոխանակման նախաձեռնությունը, որն ուղղված էր ժողովրդավարական գործիքների կիրառման միջոցով հասարակական-քաղաքական որոշումների կայացման գործընթացում երիտասարդների ակտիվ մասնակցության խթանմանը:

Ծրագրի շրջանակներում ձեւավորվել են Հայաստանը, Գերմանիան եւ Ֆրանսիան ներկայացնող՝ լրագրությամբ հետաքրքրված 16-25 տարեկան երիտասարդներից կազմված երեք (3) ազգային խմբեր: Փոխանակման ծրագրի ընթացքում երիտասարդ մասնակիցները գիտելիքներ են ձեռք բերել լրագրության պատմության զարգացման վերաբերյալ, ինչպես նաեւ քննարկել են թվային աշխարհում առկա տարբեր խնդիրներ եւ մարտահրավերներ, ինչպիսիք են օրինակ՝ կեղծ լուրերը, քարոզչությունը եւ այլն:

«Պետք է կարողությունների սահմաններում փորձենք վերստուգել ստացված տեղեկությունները»,-

Գոռ Մուրադյան, *ծրագրի մասնակից, Գյումրի:*

«Սոցիալական ցանցերում կեղծ լուրերը կարող են անխուսափելի լինել:

Բայց քննադատորեն մոտենալով տեղեկատվությանը՝ մենք կարող են օգնել կանխել կեղծ լուրերի տարածումը», նշել է Գյումրի քաղաքը ներկայացնող մասնակից Գոռ Մուրադյանը: **«Պետք է պահպանենք հետաքրքրասիրության առողջ մակարդակ՝ կապված այն բանի հետ, թե ինչ ենք կարդում մեր լրահոսում: Պետք է հասկանանք, թե ինչպես են սոցիալական մեդիայի հարթակները վերահսկում մեր տեսածը եւ, հնարավորության ու կարողությունների սահմաններում փորձենք վերստուգել ստացված տեղեկությունները»**,- շեշտել է Գոռը: Հանդիպումների ընթացքում ծրագրի մասնակից **երեսուն (30) երիտասարդները** պատրաստել են տեսանյութեր եւ լուսանկարներ, ինչպես նաեւ կատարել են մի շարք գործնական վարժություններ՝ իբրեւ ապագա լրագրողներ: Այնուհետեւ ազգային խմբերը միմյանց ներկայացրել են իրենց կատարած աշխատանքը եւ փոխանակվել պատրաստված նյութերով ու դրանց շուրջ գաղափարներով: Մասնակիցները նաեւ հնարավորություն են ունեցել ծանոթանալու ներգրավված երեք երկրների մշակույթին եւ խոհանոցին, խաղերի միջոցով սովորելու օտար լեզուներով նոր արտահայտություններ, ինչպես նաեւ խոսելու իրենց նախասիրությունների եւ առօրյայի մասին:

Կոնտակտ 2.0

Ծրագրի տեւողությունը՝ 3 տարի (ընթացիկ)
Բյուջեն՝ 21.726.356,00 դրամ (+/- 38.238,39 եվրո)
Ծրագրի գործընկերները՝ «ՕՎԵՆ» հկ (OWEN – Mobile Akademie für Geschlechterdemokratie und Friedensförderung e.V., Գերմանիա)
Հովանավորը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին մշակութային կապերի ինստիտուտի (ifa) «zivik» ծրագիր (Գերմանիայի արտաքին գործերի նախարարության միջոցներով տրամադրված դրամաշնորհ)

2020թ. սեպտեմբերին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն իր գերմանական գործընկեր «OWEN» հասարակական կազմակերպության հետ համատեղ սկսել են **«Կոնտակտ 2.0»** եռամյա նախաձեռնությունը, որն ուղղված է հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի խթանմանը:

Ծրագրով նախատեսված է ստեղծել ԼՂ հակամարտության մեջ ներգրավված հասարակութենները ներկայացնող երիտասարդների համար մի այնպիսի ապահով հարթակ, որտեղ վերջիններս հնարավորություն կունենան ձեւավորել երկխոսություն մարդու իրավունքներին առնչվող մարտահրավերների, ինչպես նաեւ խտրականության, բռնության, ինքնության, բազմազանության եւ հանդուրժողականության թեմաների շուրջ: Ավելին, այս ծրագրով «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նպատակ է հետապնդում հզորացնել երիտասարդների ներուժը եւ ապահովել վերջիններիս սոցիալական մեդիայի ոլորտում նոր գործիքների կիրառման կարողություններով եւ հմտություններով, որպեսզի նրանք նախաձեռնեն քննարկումներ պատերազմի, ազգայնականության եւ ռազմականացման հետեւանքների վերաբերյալ՝ այս թեմաների շուրջ հանրային երկխոսություն ծավալելու նպատակով:

2020թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տարածաշրջանում արյունալի պատերազմից հետո ծրագրի անձնակազմն ակտիվորեն փորձում է վերափոխել ծրագրի գործողությունները՝ այն առավելագույնս համապատասխանեցնելով հակամարտությունից առավել տուժած խոցելի խմբերի առաջնահերթություններին եւ հետաքրքրություններին:

2020թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ծրագրի անձնակազմը եւ մասնակիցները կազմակերպել են պատերազմի ընթացքում տեղահանված անձանց ներգրավվածությամբ **չորս (4) ֆոկուս խմբային քննարկումներ՝** նրանց ընտանիքի կարիքներն ուսումնասիրելու եւ վերհանված խնդիրների լուծման ուղղությամբ նոր գործողություններ մշակելու նպատակով:

Հակիրճ տեղեկություն 2019-2020թթ. ծրագրերի մասին

Տեղական համայնքների ներգրավում եւ հզորացում

Հարավային Կովկասում կանանց հիմնախնդիրներով զբաղվող ցանցի կարողությունների զարգացում

Լոռու մարզի երիտասարդների համար հակամարտության փոխակերպման վերաբերյալ դասընթացների շարք

Հայաստանի հյուսիսային մարզերում նոր սերնդի քաղլրագրողների պատրաստում

Օրինակի ուսումնասիրություն. համայնքի հզորացում

Հարավային Կովկասում կանանց հիմնախնդիրներով զբաղվող ցանցի կարողությունների զարգացում

Ծրագրի տեւողությունը՝ 21 ամիս
Բյուջեն՝ Ծրագրի բյուջեն չի կառավարվել «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից:
Ծրագրի գործընկերները՝ «ՔՐԻՍՓ» հկ (CRISP, Գերմանիա), «Համաձայնություն» ներքին տեղահանված կանանց ասոցիացիա (Consent, Վրաստան), Գյանջայի երիտասարդական ակումբ (Ադրբեջան)
Հովանավորը՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարություն, «Սեւծովյան վստահություն» կազմակերպություն (Black Sea Trust ((B|S|T))

2019թ-ին «Խաղաղության երկխոսություն» հկ-ն ներգրավվել էր Բեռլինում գործող «CRISP» հկ-ի **«Հարավային Կովկասում կանանց հիմնախնդիրներով զբաղվող ցանցի կարողությունների զարգացում»** նախաձեռնությունում՝ որպես գործընկեր կազմակերպություն: Այս նախաձեռնության հիմնական նպատակներից մեկը Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի գյուղական համայնքների կանանց հզորացմանն ուղղված գործողությունների իրականացումն էր: Բացի այդ, ծրագիրը նպատակաուղղված էր ձեւավորել համագործակցություն գյուղերում բնակվող կանանց, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների միջեւ՝ այդ կանանց ձայնն առավել լսելի դարձնելու համար:

Ծրագրի հայկական թիմում ներգրավված էին Հայաստանի Լոռու եւ սահմանամերձ Տավուշի մարզերը ներկայացնող կանայք եւ աղջիկներ: 2019թ-ին ծրագրի շրջանակներում իրականացվել են կարողությունների զարգացման **երեք (3) տարածաշրջանային դասընթացներ**, որոնց հաջորդել են մասնակիցների կողմից կյանքի կոչված տեղական նախաձեռնություններ՝ ուղղված իրենց տարածաշրջանին հատուկ կանանց հիմնախնիրների լուծմանը:

2020թ-ին ծրագրի հիմնական ուղղությունները հանդիսացել են կանանց իրավունքներին առնչվող խնդիրների ուսումնասիրությունը, ինչպես նաեւ **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Կանանց, խաղաղության եւ անվտանգության մասին 1325 բանաձեւի դրույթների վերաբերյալ իրազեկումը:**

> *«Կանայք, ովքեր ապրում են սահմանամերձ շրջաններում, պատերազմի ժամանակ իսկապես գոյատեւում են՝ հաճախ իրենց վրա վերցնելով հսկայական պարտականություններ: Մեր կյանքն ինքնին «դիմադրության կռիվ» էր...»,-*
>
> **Զարուհի Դարբինյան**, *ծրագրի մասնակից Տավուշի մարզից:*

Հաշվի առնելով ողջ աշխարհում կորոնավիրուսային համավարակով պայմանավորված սահմանափակումները՝ 2020թ-ի համար նախատեսված բոլոր ծրագրային գործողություններն իրականացվել են տեղական մակարդակում:
2020թ-ին անց է կացվել կարողությունների զարգացման հինգօրյա դասընթաց, որի ընթացքում մասնակիցները քննարկել են իրենց տարածաշրջաններում կանանց իրավունքներին առնչվող բազմաթիվ խնդիրներ՝ անդրադառնալով COVID-19 համավարակով պայմանավորված մարտահրավերներին եւ համավարակի ազդեցությանը Հարավային Կովկասի երկրների կանանց ու աղջիկների վրա:

Ծրագրի մասնակից կանայք նաեւ ակտիվ

քննարկումներ են ունեցել ընտանեկան բռնության, գենդերային անհավասարության, սահմանամերձ շրջաններում կանանց անվտանգության, ինչպես նաեւ ռազմական գործողությունների ժամանակ կանանց եւ երեխաների պատշաճ օժանդակության, ապաստարանների տրամադրման եւ այլ հարցերի վերաբերյալ:

Ինչպես արդեն նշվեց, դասընթացի հիմնական տարրերից մեկը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձեւն էր եւ բանաձեւի դրույթների իրականացման Հայաստանի Հանրապետության 2019-202թթ. գործողությունների ծրագիրը: Բացի այդ, մասնակիցներին ներկայացվել են մի շարք արդյունավետ մեթոդներ եւ գործիքներ՝ կանանց խնդիրները ուսումնասիրելու եւ համապատասխան համայնքներում դրանց խորքային պատճառների վերլուծություն կատարելու նպատակով:

Հատկանշական է, որ ծրագրի գնահատումն անցկացվել է 2020թ. դեկտեմբերին՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ քառասունչորսօրյա պատերազմի ավարտից ոչ շատ ուշ: Անդրադառնալով ՄԱԿ-ի 1325 բանաձեւին՝ ծրագրի մասնակիցներից մեկը նշել է. **«Հիմա մենք հասկացանք, որ զինված բախումների ընթացքում հատկապես կանայք են խոցելի բռնության նկատմամբ»**: **«Կանայք, ովքեր ապրում են սահմանամերձ շրջաններում պատերազմի ժամանակ իսկապես գոյատեւում են՝ հաճախ իրենց վրա վերցնելով հսկայական պարտականություններ: Մեր կյանքն ինքնին «դիմադրության պատերազմ» էր»**, - ավելացրել է նա:

Լոռու մարզի երիտասարդների համար հակամարտության փոխակերպման վերաբերյալ դասընթացների շարք

Ծրագրի տեւողությունը՝ 1 տարի
Բյուջեն՝ 1.213.130,80 դրամ (+/- 2.245,00 եվրո)
Ծրագրի գործընկերները՝ «Ճգնաժամային կառավարման նախաձեռնություն» (CMI, Ֆինլանդիա)
Հովանավորը՝ Եվրոպական միություն

Ծրագիրն իրականացվել է «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից որպես Եվրոպական միության կողմից աջակցվող **«Հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման Եվրոպական գործընկերություն նախաձեռնության»** (EPNK) մի մաս, որի նպատակն էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելը եւ տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը նպաստելը:

2010թ-ից ի վեր «Խաղաղության երկխոսություն» հկ-ն որպես տեղական գործընկեր ներգրավված է եղել «EPNK» նախաձեռնության տարբեր փուլերում: Կազմակերպության աշխատակիցները հիմնականում՝ որպես փորձագետներ եւ խորհրդատուներ, ընդգրկված են եղել «EPNK» կոնսորցիումի անդամներից մեկի՝ Ֆիննական «Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» (Crisis Management Initiative) կազմակերպության կողմից իրականացվող նախաձեռնություններում: Վերջիններիս թիրախային խումբը հիմնականում հանդիսացել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված հասարակությունները ներկայացնող երիտասարդությունը: Վերոհիշյալ նախաձեռնության շրջանակներում 2018թ. հունիսից մինչեւ 2019թ. ապրիլ ժամանակահատվածում «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից իրականացվել են ՀՀ Լոռու մարզի երիտասարդների համար կարողությունների զարգացման մի շարք միջոցառումներ:

Այդ ժամանակահատվածում ծրագրում ներգրավված են եղել շուրջ քսանմեկ (21) երիտասարդ մասնակիցներ: Ընդհանուր առմամբ՝ ծրագրի շրջանակներում կազմակերպվել է **ութ (8) ֆիլմի դիտում-քննարկում**, **հինգ (5) դասընթաց** եւ **երեք (3) հանրային քննարկում** Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող թեմաների շուրջ:

Հայաստանի հյուսիսային մարզերում նոր սերնդի քաղլրագրողների պատրաստում

Ծրագրի տեւողությունը՝ 6 ամիս
Բյուջեն՝ 8,823,528 դրամ (+/- 24.655,00 կանադական դոլար)
Հովանավորը՝ Տեղական նախաձեռնությունների աջակցության հիմնադրամ (Կանադա)

Ծրագիրը բաղկացած է եղել քաղաքացիական լրագրությանն առնչվող երկու դասընթացից, որոնցում ներգրավված են եղել Հայաստանի Լոռու, Շիրակի եւ Տավուշի մարզերը ներկայացնող **քսաներեք (23) երիտասարդներ**:

Առաջին դասընթացը, որը նվիրված էր տպագիր լրագրության եւ ֆոտոլրագրության հմտությունների զարգացմանը, կայացել է 2019թ. սեպտեմբերին Գյումրի քաղաքում՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության պրոդյուսեր, մուլտիմեդիա փորձագետ Արմեն Սարգսյանի ներգրավվածությամբ:

Ծրագրի շրջանակներում իրականացված երկրորդ դասընթացի թեմատիկ ուղղվածությունը ֆոտո եւ վիդեո լրագրությունն էր: Այն անց է կացվել 2019թ. դեկտեմբերին Դիլիջանում՝ վրացական «JAM News» լրատվամիջոցի լրագրող Դավիդ Պիպիայի կողմից՝ որպես դասընթացավար: Բացի այդ, երկու դասընթացների ընթացքում «Խաղաղության երկխոսություն» հկ-ի անձնակազմը ծրագրի աշխատանքներում ներգրավել էր նաեւ փորձագետ Մանե Պապյանին, ով պատրաստակամորեն աջակցել էր ծրագրի մասնակից երիտասարդներին իրենց անհատական լրագրողական նախաձեռնությունների ծրագրավորման եւ իրականացման գործում:

Ընդհանուր առմամբ, ծրագրում ընդգրկված երիտասարդները ծրագրի ընթացքում պատրաստել են ութ (8) հոդված, ինչպես նաեւ լուսա-տեսապատմվածքներ: Վերջիններս հրապարակվել են ծրագրային թիմի կողմից ծրագրի շրջանակներում ստեղծված առցանց հարթակում:

2019-2020թթ. ծրագրերի արդյունքները

33
դասընթաց եւ սեմինար է կազմակերպվել

178
մարդ մասնակցել է դասընթացներին

14
հանրային քննարկում է իրականացվել

26
լրատվական նյութ է լույս տեսել

85
անձանց ցուցաբերվել է իրավական աջակցություն

5
դատական գործընթաց է նախաձեռնվել

5
հետազոտական զեկույց է հրապարակվել

67
պատերազմից տուժած անձանց հետ կապ է հաստատվել

6
երիտասարդական փոխանակման ծրագիր է իրականացվել

486
զորակոչիկ մասնակցել է մարդու իրավունքների վերաբերյալ հարցումներին

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի 2019-2020թթ. հովանավորները եւ գործընկերները



2019-2020թթ.
Ֆինանսական հաշվետվությունը



Կազմակերպության ֆինանսական իրավիճակը 2019թ. դրությամբ

N	Եկամուտները եւ փաստացի ծախսերը (ՀՀ դրամ)	Ընդհանուր եկամուտ (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսեր (ՀՀ դրամ)	Ընդհանուր մնացորդը (ՀՀ դրամ)
1	Աշխատավարձեր եւ հոնորարներ*	11.914.037,45	11.886.107,73	27.929,72
2	Դասընթացի կազմակերպման ծախսեր	458.150,00	458.150,00	0,00
3	Դասընթացների անցկացման վայրերի ծախսեր	726.000,00	736.998,41	-10.998,41
4	Փոխադրման ծախսեր, ճանապարհածախսեր	1.024.771,80	1.022.912,11	1.859,69
5	Սնունդ	1.791.400,00	1.791.670,00	-270,00
6	Տպագրության ծախսեր, գրավոր եւ բանավոր թարգմանություններ	1.320.000,00	1.343.520,00	-23.520,00
7	Գնահատում	0,00	0,00	0,00
8	Այլ ծախսեր	455.944,50	480.920,00	-24.975,50
9	Վարչական ծախսեր	949.348,00	949.348,00	0,00
10	Սարքավորումներ	1.117.800,00	1.121.800,00	-4.000,00
11	Հետազոտություն եւ վերլուծություն	7.974.400,00	7.949.656,34	24.743,66
12	Փորձագետներ եւ խորհրդատուներ	3.046.000,00	3.045.000,00	1.000,00
	Ընդամենը	30.777.851,75	30.786.082,58	-8.230,83



* «Հոնորարներ եւ աշխատավարձեր» բյուջետային տողը ներառում է նաեւ արտերկրից հրավիրված միջազգային ծրագրի անձնակազմի եւ դասընթացավարների համար նախատեսված վճարումները:

Կազմակերպության ֆինանսական իրավիճակը 2020թ. դրությամբ

N	Եկամուտները եւ փաստացի ծախսերը (ՀՀ դրամ)	Ընդհանուր եկամուտ (ՀՀ դրամ)	Փաստացի ծախսեր (ՀՀ դրամ)	Ընդհանուր մնացորդը (ՀՀ դրամ)
1	Աշխատավարձեր եւ հոնորարներ*	16.195.909,00	13.975.759,00	2.220.150,00
2	Դասընթացի կազմակերպման ծախսեր	5.739.466,00	4.220.466,00	1.519.000,00
3	Դասընթացների անցկացման վայրերի ծախսեր	560.000,00	667.000,00	-107.000,00
4	Փոխադրման ծախսեր, ճանապարհածախսեր	1.513.066,00	729.000,00	784.066,00
5	Սնունդ	4.707.400,00	3.540.000,00	1.167.400,00
6	Տպագրության ծախսեր, գրավոր եւ բանավոր թարգմանություններ	3.117.181,00	1.289.180,00	1.828.001,00
7	Գնահատում	1.800.000,00	1.789.000,00	11.000,00
8	Այլ ծախսեր	789.500,00	417.500,00	372.000,00
9	Վարչական ծախսեր	1.987.802,00	1.440.968,00	546.834,00
10	Սարքավորումներ	0,00	0,00	0,00
11	Հետազոտություն եւ վերլուծություն	7.920.000,00	3.959.050,00	3.960.950,00
12	Փորձագետներ եւ խորհրդատուներ	15.700.272,00	15.640.000,00	60.272,00
	Ընդամենը	60.030.596,00	47.667.923,00	12.362.673,00

* «Հոնորարներ եւ աշխատավարձեր » բյուջետային տողը ներառում է նաեւ արտերկրից հրավիրված միջազգային ծրագրի անձնակազմի եւ դասընթացավարների համար նախատեսված վճարումները:



«Խաղաղության երկխոսություն» հկ-ի 2019-2020թթ. անձնակազմը

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության արդյունավետ գործունեության գրավականը հանդիսանում է կազմակերպության թիմի, խորհրդատուների ու կամավորների հարուստ փորձն ու անգնահատելի նվիրումը: 2019-2020 թթ-ին կազմակերպության աշխատանքներում ներգրավված է եղել ութ աշխատակից, որոնք իրենց գործունեության ողջ ընթացքում մասնագիտացել եւ պարբերաբար վերապատրաստվել են մարդու իրավունքների մշտադիտարկման, ծրագրերի կառավարման, հակամարտությունների կարգավորման, ինչպես նաեւ ծրագրերի մշտադիտարկման եւ գնահատման ուղղություններով: Կազմակերպության թիմն օժտված է Արեւելյան գործընկերության ոլորտում եւ Հարավային Կովկասի տարածաշրջանում ընթացիկ զարգացումների վերաբերյալ խորը եւ համապարփակ գիտելիքով եւ աչքի է ընկնում իր փորձով, որը ներառում է խաղաղության կառուցման աշխատանքներ իրականացնելու ստեղծագործական միջոցներ, ինչպես նաեւ հակամարտությունների արդյունքում տուժած համայնքներում աշխատելու գործնական կարողություններ:

Էդգար Խաչատրյան,

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի հիմնադիր եւ նախագահ

Մարիաննա Խաժակյան,

Խաղաղասիրական եւ գենդերային ծրագրերի բաժնի մասնագետ

Անահիտ Եգորյան,

հաշվապահ

Արթուր Սուքիասյան,

փաստաբան

Ռուբեն Մարտիրոսյան,

Մարդու իրավունքների բաժնում ռազմական փորձագետ

Անուշ Հարությունյան,

հետազոտությունների մասնագետ

Մանե Գրիգորյան,

Մարդու իրավունքների ծրագրերի բաժնի մասնագետ

Վահագն Անտոնյան,

Մեդիայի եւ ժողովրդավարության ծրագրերի եւ հանրային կապերի բաժնի համակարգող